

Դու մըխիթար՝ որոց 'ի վիշտ տազնապին,
Ապաւէն ես մեղաւորաց զըրհին .
Դու գանձ անգին մեր կամենից քաղաքի,
Հըզօր պաշտպան փոտոլիացւոց գաւառի :
Կաս 'ի տախտակ, անաղարտ գոյն Գոյ զիմաց,
Երկնաւորի, այո՛, մատանց ես կերտուած :
Լէր մեզ պաշտպան, դու մայր ամբիծ, կոյս զըթած,
Արա՛ ընդ մեզ ըստ սրբագոյն Գոց կամաց :
Յաւերժաբար երկըրպագուք հմբ Գոյին,
Անտես արա ըզպարտիս մեր, թողութիւն
Մեղաց մերոց հայցեա՛ . խընդրեմք, Տիրամայր,
Եւ յետ մահուան լէր մեր հոգւոց կենարար :

Կը շարունակուի :

Լ. ՔԵՐՈՎԵՎ Վ. ՔՈՒՆԵՐԵԱՆ

Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն

ՅՈՎԱԵՓԱՅ ԵՒ ԿՆՈՋ ՆՈՐԱ ԱՍԱՆԵԹԻ

ԴՍՏԵՐՆ ՊԵՏԱՓՐԷ ԳՐՄԻ ԱՐԵՂԻ ՔԱՂԱՔԻ

Իրանօր . Առաջիկայ վէպս կը քաղենք Վանացոյ մեծագրատան շառքնարի մը միջէն, ոչ միայն ի բրև հետաքրքրական կէս-սրբազան հնութեան պատասխի մը, և կամ անվաւեր՝ ցոյց յարգելի գրուած մը 'ի կարգէ անյայտի Ս . Գրոց, որով և ուսումնասէր կրօնադիտաց ուշադրութեան արժանաւոր, այլ որ ուղղակի մեր նպատակն է՝ իբրև մատենագրական արժեք ունեցող գողարիկ և ընտանի լէզուով նախնեաց՝ պատմական վէպ մի ընծայել զայն՝ մեր հարց հնութեանց և բարբառոյն մեծապէս յարգ տուող Բաղճմարկիս ընթերցողաց :

Եւ եղև յամին յառաջնումն, որ օր էր եօթններորդ ամսոյն՝ առաքեաց Փարաւոն զՅովսէփ շրջել ընդ ամենայն երկիրն Եգիպտացոց : Եւ եկեալ հասեալ յութ և տասն օրն 'ի սահմանս Արեգ քաղաքի, և ժողովէր ցորեան յերկրին յայնմիկ իբրև զաւազ ծովու : Եւ էր այր մի 'ի քաղաքին այնմիկ, որ էր նախարար Փարաւոնի, և էր մեծագոյն քան զամենայն մեծամեծ Փարաւոնի 'ի խորհրդականութեան . և առնուն էր առն այնորիկ Պետրապիէ, քուրմ՝ Արեգ քաղաքի : Եւ էր զուստր մի նորա կուսան իբրև ութուտան ամաց, կոյս մեծ և գեղեցիկ կերպարանօք յոյժ քան զամենայն կուսանն իբրև 'ի վրայ երկրի . և ոչինչ ունէր 'ի գտտերացն Եգիպտացոց, այլ ամենևին նմանեալ գտտերաց Իսրայելացոցն . մեծահասակ էր իբրև զՍառա, և գեղեցիկ որպէս Հաբեհկա, վայելուչ

քան զՀապէլ : Եւ էր անուն նորա Ասանէթ . և չոգաւ հռչակ գեղեցկութեան նորա ընդ ամենայն երկիր . և խնդրէին զնա 'ի կնութեան ամենայն որդիք նախարարացն և որդիք մեծամեծացն և թագաւորացն, երկուսարդքն ամենեքեան և զօրաւորքն . և էր նախանձ և հակառակութիւն 'ի մէջ նոցա վասն Ասանէթայ, և պատրաստէին 'ի պատերազմել ընդ իրեարս վասն նորա : Եւ լուաւ վասն նորա անդրանիկն Փարաւոնի, և աղաչէր զհայրն իւր տալ նմա 'ի կնութիւն : Եւ ասէ ցնա Փարաւոն հայրն իւր . Ընդէր խնդրես զու կին անարգազոյն քան զքեզ, զի թագաւոր ես Եգիպտոսի . ո՛չ աւանիկ խոսեցեալ է վասն քու զըուստր սրբայնն Մովսարացոց :

Եւ Ասանէթ անարգէր և արհամարհէր զամենայն արամբք, և էր յոյժ հպարտ և ամբարտաւան առ ամենեանս . և ոչ որ

յարանց հասն զՍտանէթ ուրեք. վասն զի աշտարակ Պետափրեայ մերձ էր յապարանս իւր, և ինքն 'ի վերայ նորա 'ի վերնատան մի զարդարեալ, յորում բնակէր Ասանէթ անտես 'ի մարդկանէ. և էր վերնատունն այն մեծ և բարձր յայժ վայեալուչ կճնայեօք և ծիրանօք զարդարեալ, և որմունքն պատուական քարամբ Գաճանչաւորօք պաճուճեալ, և ձեղունս սենեկին եղեալ զչաստուածսն Եգիպտացոց՝ ոսկեղէնք և արծաթեղէնք, որոց ոչ զոյր համար: Եւ զամենհետեան զնոսա պաշտէր Ասանէթ, և երկնէր 'ի նոցանէ, և ողջակէզս և խունկս մատուցանէր նոցա զօրհանապա: Եւ յերկրորդ սենեկին սապառք զարդոցն Սասնիթայ, յորում կայր ոսկի և արծաթ և հանգերձք ոսկեհէտք և աղուէք ընայիլք և պատուականք և ամենայն զարդ կուտութեան նորա: Եւ յերրորդ սենեկին էր շտամարանքն Սասնիթայ, և էին հոթն կուտանք սննդակիցք Սասնիթայ, և էին ամենքերան հաւատարիմ՝ 'ի մի գիշերի ծնուալք հետ Ասանիթայ, և էին ամենքեան գեղեցիկ իբրև զաստեղ սերկնից. և այր ոչ խօսէր ընդ նոսա ամենեկին, և ոչ մտնուկ արու. և էին պատուականք յերրորդ մեծ սենեկին Սասնիթայ, յորում կուտութիւն նորա զարմանէր: Եւ էր մեծ պատուհանն առաջին՝ մեծ յոյժ, որ հայէր 'ի գաւիթն ընդ արեւելս, և երկրորդն հաշէր ընդ հարաւ, և երրորդն հիւսիսի՝ 'ի մէջն ճանապարհս գնառուզոց: Եւ էին 'ի սենս ոսկի տախտակն հաստատեալ 'ի սենեկին՝ որ հայէր ընդ պատուհանն յանդիման յարեւելից, և էր տախտակն զարդարեալ անկողնօք ծիրանօք և ոսկեթելօք, որ և յանդից և 'ի ծիրանուց և 'ի բեհեկոց էր. և յայն տախտակին ննջէր Սասնէթ. և այր և կին ոչ էին երբեք նստեալ 'ի վերայ նորա: Եւ մեծ գաւիթ էր յապարանս շուրջանակի. և էր որմունք գաւթին մեծ յոյժ՝ քարամբ մեծամեծօք շորքթանկիւնի շինեալ, և գրունք էին գաւթին երեք՝ երկաթեղէնք. և զնոսա պահէին ութ արք զօրաւորք և վստեալք, և էր 'ի ներքոյ գաւթին պողարիք գեղեցիկ ազդի ամենայնի, և էր ամենայն պտուղն նորա հասուն միք առ 'ի կթել, և էր գաւթին մէջն յաշտարակն աղբիւր մեծապէս. 'ի ներքոյ աղբիւրն հնամ մեծ, որ ընդունէր զճուրս աղբիւրն և անտի գայ 'ի մէջ գաւթին. և առագանքը զամենայն ծաւ՝ որ էին 'ի մէջ գաւթին:

Եւ եղև յամին յառաջուունս հոթն ամի լիութեան, 'ի չորրորդում՝ որ օր ութուտասըն էր ամսոյն՝ եկն Յովսէփ 'ի սահմանս

Արեգ քաղաքի. և ժողովէր զչորրեան լիութեան ժամանակաց: Եւ եղև իբրև մերձեցաւ Յովսէփ 'ի քաղաքն այն, առաքեաց արս կարուպետս առ Պետափրէս բուրմ՝ և ասէ. Առ քեզ իջից. զի միջօրէ ժամ Գաշտն և ջերմութիւնն արեգակն սաստիկ է. արգ եկեալ իջից և զովացայց, և հանգեայց ընդ հովանեալ տան քո: Իբրև լուսա Պետափրէս, խնդաց խնդութիւն յոյժ և ասէ. Արհնեալ է աստուածն Յովսէփս, որ հանճեալ նա սյար գայ առ մեզ, և կոչեալ Պետափրէ զվերակացու տանն իւրոյ, և ասէ ցնա. Փութա և պատրաստեալ գտունն, և ճալ մեծապէս կազմեալ: Վասն զի Յովսէփ զօրաւորն Աստուծոյ գայ այսօր առ մեզ: Եւ լուսա Սասնէթ իթէ եկին յանդից ծառանգութեան՝ հայր և մայր նորա, խնդաց և ասէ. Երթայց տեսից զհայրն իմ և զմայր, որ եկին յանգէ ծառանգութեան մերոյ. Վասն զի ծամանակն էր հնձոց: Եւ փութացաւ Սասնէթ և զգեցաւ զպատմուճանն բեհեգեալ՝ յուսկոյ կճեալ պաճուճ, և ամ զգօտին ոսկեղէն ընդ մէջ իւր և ապարանջան 'ի ձեռս և յուտ իւր, և ընդ ապարանջոյ իւր արկաւ քեռս պատուականս, և կօշիկս ոսկեզօծ ազաւ յուտ իւր. և ակամբք զանազան էր կազմեալ յամենայն կողմանց: Եւ էին անուտն շատուածոց Եգիպտացոց զորոճեալք ամենայն զարդուն ապրջտնս և ակունս պատուականս կերպարանք կոռք էին նկարեալք. և վարձամաք եղեալ 'ի վերայ զլիտոյ նորա, և թագ կապեալ ընդ ծամկալովքն, և ամարայնոց զլիտոգրաւ ծածկեաց զզլուի իւր. և փութացեալ ընդ սանդուղան 'ի վերնատանէն՝ և եկաւ առ հայրն իւր և մայրն՝ 'ի տես. և երկիր եւ պագ նոցա և ողջունեաց զնոսա: Եւ ուրախացաւ Պետափրէս և կին նորա 'ի վերայ զստերն իւրեանց ուրախութիւն մեծ. վասն զի տեսանէին զնա պաճուճեալ իբրև զհարսն զարդուածովն. և համին զամենայն բարութիւնն, զոր բերեալ էին յազարակէ ծառանգութեան իւրեանց՝ ամենայն բարութիւն: Եւ ուրախ եղև Սասնէթ 'ի վերայ ամենայն միջաց և 'ի վերայ խաղողոյ և թղոյ և արմատոյ և այլոց միջաց զոր բերին: Եւ ասէ Պետափրէ ցղուտար իւր Ասանէթ. Արդեակ իմ, և ասէ Սասնէթ. Ահա հաւնեստ եմ, տէր: Եւ ասէ Պետափրէս. Եկասիկ 'ի միջի մերում, և խօսեցայց ընդ քեզ զբանն իմ: Եւ նստաւ Ասանէթ 'ի մէջ հօր և մօրն իւրոյ. և կալաւ Պետափրէս զաջոյ ձեռն գտտերն իւրոյ և հարմուրեաց զնա, և ասէ. Արդեակ իմ՝ Ասանէթ. և ասէ Ասանէթ. Ահաւասիկ, տէր իմ՝ հայր: Եւ ա-

սէ Պետափրէս . Յովսէփ զօրաւորն Աստու-
ծոյ զայ այսօր առ մեզ . և նա է իշխան ա-
մենայն երկրիս Եգիպտացոց . զի Փարա-
ւոն կացոյց զնա 'ի վերայ ամենայն ընչից
իւրոց . և նա է փրկիչ ամենայն երկրիս , զի
նա տայ ցորեան աշխարհիս , և ապրե-
ցուցէ զմարդիկ 'ի հանդերձեալ և առա-
ջիկայ սովոյն . և Յովսէփ' այր աստուածաւ
պաշտ , որչափո՞հ , յի իմաստութեամբ
և պարկեշտ և նմա վայելէ . և Յովսէփ է
այր զօրաւոր իմաստութեամբ և հանձնարով ,
զի հոգի Աստուծոյ և շնորհք Տեսնոն են ընդ
նմա . արդ եկ այժմ' , որդեակ , տաց զքեզ
նմա 'ի կնութեան , և 'ի հարստութիւն
լինի քեզ փեսայութեան յախտեանս ծա-
մանակաց : Եւ եղև իբրև լուա Ասանէթ
զբանն հօրն իւրոյ , այլազունեցաւ երես տը-
րա , և տրտմեցաւ յոյժ բարկութեամբ .
և ինթիւ հայեւով հայէր : Խօսեցաւ Ասա-
նէթ . և սաէ . Տէր իմ հայր , ըստ բանիցս
այսոցիկ' տայք զիս իբրև զգերի առն այլ-
ազգւոյ և փախտականի և վաճառելոյ .
ոչ է նա որդի հովոյց յերկրէն Քանա-
նացոց , և յանդիմանեալ եղև անձամբ
ննջելով ընդ տիկնոջն իւրում . և տէր
նորա արկ զնա 'ի բանտ խաւարին . թէ
ե հէ՛նս զնա 'ի բանտէն թազարտն , զի
մեկնեաց զերգալ նորա , զոր օրինակ մեկ-
նան կանայք պառաւուռք Եգիպտացո-
ցրն . ոչ եղիցի այդպէս . այլ ամուսնացոյց
ընդ անդրասիկ որդւոյն Փարաւոնի , վասն
զի նա է թագաւոր ամենայն Եգիպտոսի
և այս պատկառաց Պետափրէս զարձեալ
խօսել ընդ գտերն իւրոյ վասն Յովսե-
փայ . զի յանդգնարար և բարկութեամբ
արար պատասխանի : Եւ այր մի ծառայ
զայր առ Պետափրէս , և սաէ . Աշխատիկ
Յովսէփ առ զուրս մերձ կայ գաւթիս :
Եւ Ասանէթ փախեաւ յերեսաց հօր և
մօր իւրոյ , յորժամ լուա զբանն զայն' որ
խօսէին զնա վասն Յովսեփայ , և ել 'ի
միւրեւտունն և եմուտ 'ի սենեակ իւր : Եւ
եկաց 'ի պատուհան իւր մեծ , որ հայէր
ընդ արևելս , վասն տեսանելոյ զՅովսէփ ,
յորժամ մտանէր 'ի տուն հօր իւրոյ :

Եւ ելին Պետափրէս և կինն և ամենայն
ծառայք նորա ընդ առաջ Յովսեփոյ և
ամենայն սպասաւորք տանն , և բացեալ
զըրրոս գաւթին , որ հայէր ընդ արևելս ,
և եմուտ Յովսէփ նստելով 'ի վերայ կառացն
Փարաւոնի . և էին լծեալ 'ի կառան չորս ձիս
սպիտակս իբրև զձիւն' սոկէսանձք ամենե-
քեան . և կառքն էին ամենեկն բոլորովին
սոկիկ : Եւ էր Յովսէփ զգեցեալ զհանդերձս
պախտեալ և գեղեցիկ և ձորձ անկանելոյն
ծիրանի բեհէզոյ' ընդելուզեալ սակով : և

պսակ սոկի 'ի գլուխ նորա , և շուրջ ըզ-
պսակաւն էին երկոտասան ակուռք պա-
տուականք , և 'ի վերայ ականցն էին երկու-
տասան սոկեղէն ճառագայթատարած կեր-
պարանք . և գաւազան յանկնձ ձեռին նո-
րա , և յաջոյ ձեռի իւրում բարձր ոտստ
ձիթինեակ , յորում էր պարարտութիւն
պտղոց և պտուղն ունէր պարարտութիւն
սաստիկ : Եւ եմուտ Յովսէփ 'ի գաւթին , և
փակեցան դրունքն ամենայն . և այր և կին
մնաց արտաքոյ գաւթին . զի պահապանք
դրանցն արխեցին զդրունսն , և ոչ ումեք
ետուն մտանել : Եւ եկին Պետափրէս և
կինն իւր և ամենայն ազգականք նորա ,
բոյց 'ի յԱսանէթայ' 'ի գտերն նոցա ,
և երկիր պագին Յովսեփայ 'ի վերայ
երեսաց իւրեանց յերկիր : Եւ Յովսէփ էլ
'ի կառաց իւրոց . և ընկալան զնա 'ի գրիս
իւրեանց , Եւ ետես Ասանէթ զՅովսէփ , և
սիրեաց զնա 'ի սէր մեծ , և խորտակեցաւ
անձն նորա , և լուծան ծուռեք նորա , և
զողայր ամենայն մարմին նորա . և ահ մեծ
անկաւ 'ի վերայ նորա , և երկիւզ սաստիկ
երկեաւ Ասանէթ . յոգւոց եհնա 'ի սրտէն
և սաէ . Չինչ գործեցից , ո՞վ այժմ թշուա-
ռականս . ոչ այժմ արհամարհելով խօսէին
ընդ իս հայր և մայր իմ և սաէին' թէ
որդին հովուին զայ առ մեզ յերկրէն Քա-
նանացոց , ոչ պատմին վասն Յովսեփայ .
և սա իբրև զարեգակն եկն առ մեզ , և ե-
մուտ 'ի տաճարս մեր . և ես անդգամս և
անգութս և անպէտս' արհամարհելով ար-
համարհեցի զնա անարգելով և խօսեցայ
բանս չար վասն նորա : Եւ ոչ զիտէի թէ
Յովսէփ իբրև որդի Աստուծոյ իցէ . քանզի
ո՞վ որ 'ի մարդկանէ ծնանիցի այսպէս գե-
ղեցիկ . և յորպիսի յարգանդէ երկնիցի
այսպիսի լուսաւոր մարդ . այլ ևս հէ՛զս
և անդգամս' խօսեցայ ընդ հօր իմոյ վասն նո-
րա բանս չարս . և այժմ' ո՞ր երթաց և
թագեաց յերեսաց սորս , զի մի տեսցէ
Յովսէփ սիրելին Աստուծոյ . վասն զի խօ-
սեցայ բանս չար վասն նորա . և ո՞ր թա-
գեաց յերեսաց նորա . ինձ այսպէս թուի ,
նա զամենայն ծածուկս տեսանէ , և ոչինչ
թագչի և զանխլանի 'ի նմանէ , վասն լու-
սոյն մեծի որ 'ի նմանէ է : Եւ այժմ քա-
ւեա զիս , Տէր , 'ի նմանէ , զի խօսեցայ
վասն նորա բանս չար անգիտութեամբ
Եւ արդ տացէ դիս հայր իմ յաղախու-
թիւն և սպասաւորութիւն , և եղէց նմա
յազպիսնութիւն յախտեանս յախտեանից :

Եւ եմուտ Յովսէփ 'ի տաճարն Պետա-
փրէսի , և նստաւ 'ի վերայ սճառոյն . և լը-
սալին զտես նորա , և եղին նմա սեղանա-
ուանձին , զի ոչ ուտէր Յովսէփ ընդ Եգիպ-

տաքինն. վասն զի պղծութիւն համարէր
 ճշտակել ընդ նոսա: Եւ ասէ Յովսէփ ցՊն-
 տափրէս և ամենայն ազգականն իւր. Ո՛վ
 է կինն այն՝ որ կայ ՚ի վերնատունն մերձ ՚ի
 պատուհանն. ՚ի բայ զնասցէ յապարանիցս
 յայտանէ: Չի երկնէր Յովսէփ զմտա-
 ւածէր այսպէս մի գուցէ աշխատուցէ զիս.
 զի ձանձրացուցանին զնա ամենայն կա-
 նայք և զստիքը մեծամեծայն Եգիպտոսի.
 յորժամ տեսանէին զՅովսէփ շարաչար
 ախտանային վասն զեզդեցութեան նորա:
 Բայց Յովսէփ արհամարհէր զնոքը, և
 զհրեշտակս՝ որ առաքելին կանայքն Եգիպ-
 տացւոց՝ հանդերձ ոսկւով և արծաթով
 և ըծմայիւք մեծամեծը՝ ՚ի բաց դարձու-
 ցանէր սպառնալեօք և թշնամանօք. վասն
 զի ոչ մեղայց, ասէ, առաջի Տեսան ժբրկ-
 չին Խորայիւի. և զկերպարանս հօր իւ-
 րոյ Յակոբայ առաջի աչաց իւր կարգէր
 ՚ի յամենայն ժամ. վասն զի ասէր Յակոբ
 ցՅովսէփ և ամենայն որդիս. Պահիցեք
 զանձինս ձեր, որդեակք իմ, ՚ի կանանց օ-
 տարան՝ առ ՚ի չհաւասարելոյ ընդ նոսա.
 վասն զի հաւասարութիւն նոցա կորուստ
 է ե. ապականութիւն. Վասն այստիկ ա-
 սաց Յովսէփ թէ ՚ի բայ երթիցէ կինն այն
 յապարանաց աստի: Այլէ ցնա Պետափրէ.
 Չնա՝ որ տեսեր ՚ի վերնատունն՝ ոչ է օտար
 կին, այլ դուտոր մեր և ծառայ քո, կու-
 սան սառն. և ոչ քը ետես զնա յարանց,
 րոյց միայն ՚ի քէն այսօր. եթէ կամիս՝ ե-
 կեալ երկրպագցէ քեզ, վասն զի դուտոր
 մեր է որպէս զբոյր քո: Եւ որպէս եղև
 յօրախտութիւն մեծ յանել Պետափրէս
 եթէ կոյս է և ատէ անկարկել զամենայն
 այր. և Յովսէփ խորհցաւ ՚ի մտի իւրում
 և ասաց. Թէ կոյս է և ատէ զամենայն
 այր, ոչ աշխատ առնէ զիս: Եւ ասէ Յով-
 սէփ ցՊետափրէս և ցամենայն ազգատուհնն
 նորա. Եթէ նա դուտոր քո է և կուսան,
 եկեացէ զի քոյր իմ է, և սիրեցող զնա
 յայսմ հետէ իրրե զբոյր իմ. Եւ մայրն նո-
 րա՝ ոչ ՚ի վերնատունն. և ամ զԱսանէթ, և
 կացոյց զնա առաջի Յովսէփայ: Եւ ասէ
 Պետափրէս ցԱսանէթ դուտոր իւր. Ող-
 ջունես զեղբայրդ քո, զի դա է կոյս իրրե
 զքեզ մինչև ցայսօր, և ատէ զամենայն
 կին՝ որպէս և զու զամենայն այր օտար:
 Եւ ասէ Ասանէթ ցՅովսէփ. Ուրախ լեր,
 տէրք, օրհնեալք Ստաուտոյ բարձրելոյ: Եւ
 ասէ Յովսէփ ցԱսանէթ. Օրհնեցէ զքեզ
 Տէր, որ կենդանի առնէ զամենայն ինչ: Եւ
 ասէ Պետափրէ ցգուտոր իւր. Մատիւր և
 համբար ըրեաց զեղբայրդ քո: Եւ եղև իրրե
 մերձեցաւ Ասանէթ համարելի զՅովսէփ,
 ձգեաց Յովսէփ զձեռն իւր և եղ ՚ի վերայ

կրծոց նորա և ասէ. Ոչ վայելէ աստուա-
 ծապալտի՝ որ օրհնէ զԱստուած և ճաշ առ
 զհաց օրհնեալ և կենդանարար, ըմբէ բզ-
 բաժակ օրհնեալ անմահութեան, օձանի
 օձմամբ անապականութեան, համբարել
 զկին օտարոտի, որ օրհնէ բերանով իւրով
 զկուռս մեռեալս և համերս, և ճաշակէ ՚ի
 սեղանոյ նոցա կերպուրս հեղձուցիկս, և
 ըմպէ ՚ի սեղանոյ ՚ի բաժակէ նոցա զինի նեւ-
 զուժեան, և օձանի օձմամբ կորստանս:
 Այլ պարտ է առն աստուածապալտի համ-
 բուրիլ զիւր բարեկամ և զբարեպալտ մայր
 և քոյր, և զամենայն՝ որ թէ ՚ի ցեղէն իւրում
 իցէ և յազգէ, և կին զանկողնակից իւր,
 և բերանով իւրով խոստովանի զԱստուած
 կենդանի: Եւ այլեւ և կնոջ բարեպալտի
 ոչ վայելէ համբարել զայր օտարական.
 վասն զի պղծութիւն է առաջի տեսան Աս-
 տուծոյ: Եւ իբրև լուաւ Ասանէթ զբան
 Յովսէփայ զղջացաւ յոյժ և տրտմեցաւ
 մեծապէս. ընդւոց հանէր և հառաչէր, և
 պուշցաւ յոգ Յովսէփ, հեղ և ողորմած
 և երկուրած Ստաուծոյ՝ և հայէր. և լցան
 արաստուօք աչք նորա: Եւ ետես զնա Յով-
 սէփ, և ողորմեցաւ նմա. և ամբարեանալ
 զալ ձեռն իւր Յովսէփ, և եղ ՚ի վերայ
 զլիտոյն Ասանէթայ և ասաց. Տէր Աստուած
 հօր իմոյ Խորայիւի, զօրաւոր և բարձրալիչ
 Յակոբայ, որ կենդանացուցի զամենայն,
 և կոչցեր ՚ի խաւարէ ՚ի լոյս և ՚ի մուրտու-
 թենէ ՚ի ճշմարտութիւն, մահուանէ ՚ի կեա-
 նըս. գու, Տէր, օրհնեալ զիդոս զայս, և
 նորոգա զսա հոգւովդ քո և ստեղծմամբդ
 քո, վերստին կենդանացո զսա ծածուկ
 ձեռամբդ քո. և կերիցէ հաց կենաց, և
 սորրցէ բաժակ կենդանութեան. և համա-
 րեա զսա ՚ի ժողովորդս քո՝ զոր ընտրե-
 ցեր յառաջ քան զիննն ամենայնի, և
 մոցէ ՚ի հանգիստ քո՝ զոր պատրաստեցեր
 սիրելեաց քոց, և կացցէ ՚ի կենդանու-
 թեան քում յախտեանս ժամանակաց: Եւ
 ուրախ եղև Ասանէթ վասն օրհնութեան
 Յովսէփայ ուրախութիւն մեծ. և զարձեալ
 զնայս ՚ի վերնատունն առանձինն, և անկաւ
 ՚ի վերայ մահաց իւրոց հառաչելով. վասն
 զի էր նորա ուրախութիւն և տրամութիւն
 և երկիւղ և զողովմն և քրտուք սաստիկ.
 յորժամ լուաւ զամենայն բանս Յովսէ-
 փայ, զոր խօսեցաւ ընդ նմա անուամբ Աս-
 տուծոյ բարձրելոյ, և սրոց լայիւն մեծ դառ-
 նապէս, և զղջացաւ սիրտ նորա յաստուած
 ծոց իւրոց զոր պալտէր, և ատեսց զամե-
 նայն կուռս իւր. և անաց մինչև ՚ի մեր-
 ձենալ երկնոյն: Եւ Յովսէփ եկեր և արք.
 և ասէ ցմահուանս զի լծեցնն զձիս
 զկառսն. վասն զի ասաց թէ երթայց ընդ

երկիրս ընդ այս: Եւ առէ Պետարիք ցՅովսէփ: Հանդիպէ տէր իմ՝ այսօր աստ, և վազինն երթիցես զճանապարհն քո: Եւ առ սէ Յովսէփ: Այլ այդպէս. այլ զնացից այսօր, վասն զի այսօր՝ յորժամ սկսաւ առնել Տէր զամենայն արարած իւր: Եւ յաւուրն և օթիներորդի յորժամ՝ զարձցի օրս այս՝ զարձայց և ես առ ձեզ, և Հանդեպայց առ ձեզ:

Եւ զնաց Յովսէփ զճանապարհ իւր. և Պետարիք ընտանեօք իւր զնացին զժառանգութիւն իւրիանց. և մնաց Ասանէթ միայն Հանդերձ եօթն հուսանօք. և ծանրանայր և լայր մինչև ՚ի Հաշեղ արևուտն, և Հաց ոչ եկեր և ջուր ոչ Հարս: Եւ եղև իւրև մերձեցաւ զիշերն, և ննջին ամենեփին որ ՚ի տանն էին, և Ասանէթ միայն արթուն էր, և զմտաւ ածէր զՅովսէփ և լայր և կոծէր վկուրծսն սաստիկապէս, և երկնչէր երկիւղ մեծ և զողայր ՚ի զողուն մն սաստիկ: Եւ իրբև խաղաղացան ամենեքեան, յարեաւ Ասանէթ ՚ի տախտէն իւրմէ, և էջ Հանդարտ ընդ սանդուխն ՚ի վերև տասննէն, և եկն մերձ ՚ի յերկանս երկանաղացն. և երկանաղացն ննջէր Հանդերձ որդւովքն. և փութացաւ Ասանէթ և քահկեաց ՚ի զրանց զխորզ վարագորաց, և ելից զնա մտիրով ՚ի Հնոցարանէն. և Հաննուլ ՚ի վերնատունն՝ եղ ՚ի վերայ գետնոյն, և առևալ զդուրսն փակեաց զանափակովքն. և Հառաչիաց Հառաչմար մեծաւ և արտասուօք: Եւ լուսւ զայնեակն Հանդերձ կուսանօքն որ էին ընդ նմա սննդակից, զոր սիրէր Ասանէթ քան զամենայն կուսանսն. եկին ՚ի զուրսն Ասանէթայ, և զտին զգրուես փակակաւ, և լուսն զՀառաչանսն և զյալունն: Եւ եկին ՚ի զուրս նորա և ասէին. Չի՛ է քեզ, տիկին մեր Ասանէթ, և զինչ է որ վշտացուցանէ զքեզ. քայց մեզ և տեսցո՛ք զի՛ եղև քեզ: Եւ ոչ երաց Ասանէթ զգրուանն. քայց ՚ի ներքուստ ասէ ցնտա. Վշտիս իմ՝ ծանրանէ, և ոչ Հանդիմ յանկողնի իմում. և յառնել և բանալ ձեզ ոչ կարեմ. վասն զի տկարացայ յամենայն սնդամոց իմոց. և զուրք զնացէք յիւրաքանչիւրսննեակս և Հանդեբուրք, և թոյլ արարէք ինձ, զի ես զաղարեցից, և սակաւ մի Հանգիստ ստից: Եւ կուսանքն վասն բանի նորա չուգան յիւրաքանչիւր սննեակս: Յայնժամ յարեաւ Ասանէթ, և երաց զուրսն լոբիայն, և չուգաւ յերկրորդ սննեակսն, ուր էին սապարթ զարգուց նորա. և բացեալ զարկզի՛ և եՀան զագանիխնս սիտա և թիւրաթուխս. և այն էր Հանգերձ նորա սպոյ յորժամ՝ մեռաւ եկրայրն նորա կրտսեր՝

զայն Հանդերձն զգեցեալ էր Ասանէթ, և այնիւ սգայր զեղբորոյ իւր: Եւ ագաւ Ասանէթ զեւաւ ագաննիխս իւր, և երեր ՚ի սննեակս իւր. և եղեալ զգրուան փակեաց զճանապարհովքն. և փութացաւ Ասանէթ, և եՀան զՀանդերձն զարքունականսն և զբուհեզն և զընդհլուգեալ ոսկւով ծիրանինս, և զգօտին ոսկի, և զթճազն զխոյ, և զապարանջանսն ՚ի ձեռացն և յարիցն, և առևալ ընկէր զամենայն ընդ պատահանն, որ Հայէր ընդ Հիւսիսի. և փութացաւ Ասանէթ և էառ նոյնպէս զչաստուածան ամենայն զուսկեղէն և զարծաթեղէնս, որոց ոչ գոյր թիւ համարոյ, ընկէց ընդ պատահանս ՚ի վերնատանն. և առ գնեթիխն իւր զարքունականսն Ասանէթ, զՀացն և զձուկն և զմիս երնջացն, և զամենայն ողջակէզս շատուածոցն իւրոց, և զկահ զինոցն յորժամ՝ ողջակէզն ասէնէր, և ընկէց զնա ընդ պատահանն և ետ զամենայն կերակուր շանց օտարաց. վասն զի ասաց Ասանէթ՝ Ա՛ր գուցէ կեբիցինն շուրք իմ՝ յրեթեաց և յողջակիզացն զառանց կոռց, այլ կեբիցինն շուրք օտարաց: Եւ եղև յետ այլոր, և սու Ասանէթ զմաշկ քրծին, քահկեաց՝ զոր կից մտիրով, և արկ զայն ՚ի վայր, և ածաւ քուրձ ընդ մէջ իւր. և լուծեալ զհիւսանակ Ներայն. և արկ ՚ի վերայ գլխոյն իւրոյ զմոխիրն ՚ի մէջ գետնոյն, և բախեաց ձեռօքն զկուրծսն, և ելաց լալին մեծ գառնապէս զգիշերն ամենայն կոծելով մինչև ցառաւօտն: Եւ եղև ընդ ոռաւատանայն, և ետևս Ասանէթ զմոխիրն կտառցեալ յարտասուացն՝ որ ՚ի վերայ տանն յատակին: Եւ զարձկալ անկաւ ՚ի վրայ երևացաւ իւրոց մինչև ցերեկոյն մերձ ՚ի Հաշեղ արևուտն. և այսպէս արար Ասանէթ մինչև եօթներորդ օրն. այլ զարջարէր և տառապեցուցանէր զանձն իւր. յեօթներորդ աւուրն Հաց ոչ կիւր և ջուր ոչ արք: Յաւուրն ութներորդ ընդ տառաւոտանն յորժամ՝ սկսաւ ճանջիւն Հառուցն իրենը, և Հաշիւն շանց ՚ի ճանապարհորդան, Համարմեալ զգլուխս իւր ՚ի վեր, վասն զի էին կթուցեալ և լուծեալ անգամք իւր առ կարտաութեան կերակրոյն եօթն աւուրցն, և անեալ ՚ի ծունկսն՝ եղ զձեռն ՚ի վերայ գետնոյն ՚ի վայր ունելով զգլուխն. և էր Հեր գլխոյն լուծեալ և փառտեալ ՚ի սասակութենէ մոխրոյն, և ձեռն կցեալ Ասանէթ՝ աշխարհ զգլուխս իւր, և կոծէր զկուրծս իւր, յողուց Հանէր մեծապէս և Հառաչէր, զՀեր գլխոյն իւր ճողէր, և մոխիր ՚ի վերայ արկանէր: Եւ այնպէս աշխարհացաւ Ասանէթ և նեղաարտեցաւ և տկարացաւ ՚ի զօրութենէ իւրմէ: Եւ զարձաւ յորմ կոյս, և նստաւ ՚ի

վերայ պատու հանին որ Հայէր յարեւելս, և զգլուխն եզ 'ի գոգ իւր, և կցեաց զձեռն 'ի վերայ ձեկացն իւր, և խօսք ամենինն հատեալ էին 'ի բերանոց նորա, և ոչ երաց Սասնէթ զքերան իւր եօթն օր 'ի նեղութեանն իւրում. և ասաց Ասանէթ 'ի սրտի իրում՝ Թէ Զինչ գործեցից, կամ գո՞ աբարից ասպաւէն, կամ յո՞ երթոյց կոյս որբ և անոք թողեալ ստեցեալ ամենեցուն զիս. հօր և մօր իմոյ ատեցիալ եղէ. վասն զի ես ստեցի զաստուածսն նոցա, զի կրուտի գնոսս, և կոխու մն արարի ամենայն մարդկան, և վասն այսորիկ ատեցին զիս Հայր և մայր իմ՝ և ամենայն ազգականքն իմ. և ասաց Հայր իմ. Ոչ ևս կոչեացի մեզ դուստր Ասանէթ, վասն զի կորոյս զաստուածսն մեր զտակեղէնս և զարծաթեղէնս. և ահա ստեղծեղէ ամենայն մարդկան, վասն զի ամբարտաւանցի ես զամենայն մարդովք և զամենեքումք՝ որոց խօսելին զիս. և այժմ յայս նեղութեանս իմում ատեցի եղէ ամենեցունց. և ուրիս եղէ ընդ նեղութիւնս իմ. Զայս միայն խորհէր, և ասէր. Տէր Աստուած բարձրեալդ՝ Յովսեփայ, որ ասես զամենեսևան որ պաշտեն զկուռս մեռեալս և Համերս և անչունչս, վասն զի դու ես Աստուած վրէժնիցիր և ահաւոր 'ի վերայ ստտուածոց օտարաց: Յաղագս այսորիկ և զիս ասեաց Աստուած. զի ես պաշտեցի զկուռսն անմեռունչս և Համերս և անչունչս, և օրհնեցի զնոսս և կերայ 'ի գոհից նոցա, և բերան իմ սղծեցաւ 'ի սեղանայն, և ոչ ունիմ իշխանութիւն կարգաւ առ Աստուած երկինց և առ բարձրակալ փրկիչն Յօսիսեփայ. վասն զի սպակահեցաւ անմեծ իմ՝ 'ի գոհից կոռցն և ողջակիզաց նոցա. և արգ լուայ յոմանց՝ զի Աստուածն ճշմարիտ և ճրբայեցոցն, և Աստուած կենդանեաց է. Աստուած ուղորմած, երկայնամիտ և և բարումողորմ, և ոչ Համարի մարդոյ զմեզս, Համբերէ ապաշխարողի, և ոչ յաղիմանէ զմարդ 'ի ժամանակին նեղութեանն իւրոյ: Եւ արգ Համարձակեցայց և զարձայց առ նա, ասպաւէն արարից զնա, և խոստովան եղէց նմա զամենայն մեզս իմ, և Հեղից զպաղատանս իմ առաջի նորա, և ողորմեցի ինձ: Ո՞ գէտէ եթէ Հայի 'ի տառապանս իմ և անաջի իւր. Թերես Հայեացի յամայութիւնս և զթասցի յիս: Ո՞ գիտէ եթէ տեսցէ զողորմն իմ, և օգնեացէ ինձ. վասն զի նա է Հայր որբոց և օգնական նեղելոց. Համարձակեցայց և աղաղակեցից առ նա, զի թե՛րևս թողութիւն արասցէ ինձ: Եւ յարեաւ Ասանէթ յորմոյն՝ յոր նստէրն, և զարձաւ 'ի պատուհանն՝ որ Հայէր ընդ արեւելս, և

կանգնեցաւ 'ի ձուռսն իւր, և Համբարձեալ զձեռս իւր յերկինս, և երկեաւ Ասանէթ բանալ զբերան իւր յերկինս և ասել զանունն Աստուծոյ: Դարձաւ անգրէն յորմն կոյս, և նստաւ և հնար ձեռամբ զկուրծս իւր և զգլուխն բազում անգամ, և խօսէր 'ի սրտի իւրում՝ զբերանն ոչ բանալով, և ասէր. Ոչ տառապեալ ես, որբ և աւայացեալ բերան իմ՝ 'ի գոհից կոռցն պղծեալ է յօրհնելոյ զաստուածսն Եզրպատացոց. և այժմ արատուօր իմովք այստ. և մոխրովք շարչարեցից զմարմին իմ. սակայն և ոյժմ ոչ խիչեմ բանալ զբերան իմ օրհնել զանունն քո սուրբ և ահաւոր. մի գուցէ բարկացի ինձ Աստուած վասն կարգալոյ զանունն նորա սուրբ: Արդ զինչ գործեցից ևս թշուառականս. Համարձակեցայց և բացից զբերան իմ առ նա, և թէ սրմտեալ ընթալարեցէ զիս՝ կարող է զարձեալ բօշկել զիս: Եթէ խրատեսցէ զիս ամանածք, կարող է կրկին մտիթարել զիս, և 'ի խրատեն՝ զարձակ նորոգեսցէ զիս ողորմութեանն իւրով. եթէ տրամեցայց վասն մեղաց իմոց, Հայտեացի ընդ իս, և թողցէ զամենայն մեզս իմ: Արդ Համարձակեցայց և բացից զբերան իմ առ նա, Թերևս ողորմեցի ինձ և թողցէ զմեզս իմ:

Եւ յարեաւ Ասանէթ յորմոյ անտի, և կանգնեցաւ 'ի ձուռսն իւր, և Համբարձեալ զձեռս իւր յարեւելս՝ Հայեցաւ յերկինս, երայ գբերան իւր առ Աստուած և ասէ. Տէր Աստուած յաւիտեանց, որ ստեղծեր զամենայն և կենդանացուցեր կենդանութիւն ամենայն արարածոց քոց. որ Հաներ զանեղեղոյթս 'ի . . . (պակասի) . . . որ ստեղծեր զարարածս քո գերեւելիս յաներևութից և յոչէից. որ բարձրացուցեր զերկինս և հիմնեցուցեր զնա 'ի վերայ Հողմոց, որ Հիստատեսցի զերկիրս 'ի վերայ Գոլոց սուրբ բարամբք քով. որ Հեղեմ քորինս մեծամեծս 'ի վերայ Գոլոց. և քարինք ոչ ընկղմին, այլ են իբրև գտերև կազմոյ 'ի վերայ Գոլոց. և են քարինքն կենդանին, և ձայնի քում լսեն, Տէր. վասն զի դու, Տէր, կենդանարար ես ամենայն արարածոց քոց. 'ի քեզ ասպախիւնս, Տէր, և առ քեզ սիրեմ զպաղատանս իմ, և քեզ յայտնեցից զանօրէնութիւնս իմ. խնայեալ յիս յիս, Տէր, զի մեզալ և յանցեալ առաջի քո, Տէր. բազմապատիկ մեղայ և անօրինեցայ, ամբարշտեցայ, և խօսեցայ անոն չար և անճառելի. պղծեցաւ բերան իմ 'ի գոհից կոռցն. յաղագս որոյ բազում անգամ պղծեցայ անգիտութեամբ, և պաշտեցի զկուռս մեռեալս և զՀամերս: Եւ արգ ոչ եմ տրժանի բանալ զբերան իմ

վասն բազում մեղաց իմոց: Էս Ասանէթ
 դուստր Պետափրէ քրմին, որ եմ գլխոյ, էի
 երբեմն զժողով և ամբարտաւան և ամբար-
 նաւաճ, և բարձրացեալ մեծութեամբ քան
 զամենայն մարդ. այժմ որք եղէ և ամայի,
 թողեալ յամենեցունց. առ քեզ տին ու-
 նիմ, Տէր, և առ քեզ աղաղակեմ. դու
 փրկեա զիս յառաջ քան զհասաննին հա-
 լածանաց իմոց: Զի որպէս մանուկ տղայ
 զարհուրեալ փախչի առ հայրն իւր, հայրն
 ձգեալ զձեռն՝ առցէ զնա ՚ի գետնոցն, և
 մանուկն պնդէ ձեռամբն զպարանոցաւ
 հօրն, և ապահովասցի և յաշէն հանգչիցի
 ՚ի գիրկս հօրն իւրոյ, այնպէս և ես խոռ-
 վեալ եմ յամենայն կողմանցն, և առ քեզ
 Տէր և հայրդ իմ փախստական անկասեմ.
 արդ դու ձգեա զձեռն քո, և յափշտակեա
 զիս յերկրէ: Զի ահաւասիկ վայրենի ծե-
 րացեալ առիւծն փախստական առէ զիս.
 զի նա է հայր աստուածոցն Կղզիտաւ-
 ցոց. վասն զի որդի առիւծի են ամենայն
 կուռք Հիթանոսաց. և ես ընկեցի զամե-
 նայն աստուածան ՚ի բաց և կորուսի զնո-
 սած, և առիւծն հայր նոցա սրտմտեալ հա-
 լածէ զիս: Ապրեցս զիս, Տէր, ՚ի ձեռաց
 նորա, և ՚ի բերանոյնորա փրկեա զիս. մի
 գուցէ յափշտակէ զիս, և գէշ գէշ պա-
 տառէ և արկցէ ՚ի հուր հնոցի, և հուրն
 արկցէ ՚ի մէջ մրկիկն, և մրկիկն շողա-
 պատէ զինև, և խաւարեցանց զիս. և
 արկանէ զիս յանգունդս խորոցն, և կլցէ
 զիս ՚ի կէտն մեծ, որ ՚ի սկզբանէ էր, և կու-
 րեայց յախտեանս ժամանակոց. փրկեա
 զիս, Տէր, յառաջ քան զգառն այսր ամե-
 նայնի ՚ի վերայ իմ. փրկեա և ամբացս
 զամայացեալս. զի հայր և մայր իմ ուրացան
 զիս և ասացին. Ոչ է մեզ դուստր Ասա-
 նէթ, զի կորոյս զաստուածան մեր և ա-
 տեաց զնոսա. յաղագս պստորիկ առ լիեղէ
 նոցա և ամայի և որք. և յոյս ՚ի քեզ եղէ,
 Տէր, և ոչ յայլ որք. յայլ որ ոչ ապահինիմ,
 բայց միայն ՚ի քեզ, Տէր. զի դու ես հայր
 որբոյ և հալածելոց և օգնական նեղելոց:
 Ոլորմեա ինձ կուսանի և տառապիլոյս
 և որբոյս. զի դու ես բարի և քաղցր հայր
 և մայր: Ո՛ հայր է իբրև զքեզ, Տէր,
 քաղցր, և սրպէս մայր զթած որպէս
 զքեզ, Տէր. և ս՛վ երկայնամիտ մեղուցե-
 լոց իբրև զքեզ. ահա զամենայն զոր ես
 ինձ հայր իմ Պետափրէ ՚ի ժառանգութիւն
 անցաւոր և առ ժամանակիս են, անապա-
 կան և յախտեանական ոչ. իսկ քո ամե-
 նայն ինչ նորէք և ժառանգութիւն անանց
 է և անվախան: Եւ այժմ հայտաց յիս
 ՚ի տառապեալս և ողորմեա ինձ: Ահաւա-
 սիկ փախստական եղէ յամենեցունց, և

զքեզ, Տէր, ապաւէն ինձ արարի. ահաւա-
 սիկ զամենայն բարութիւնս երկրի Քողի,
 և զքեզ յոյս ինձ արարի: Եւ արդ խոր-
 գով և մոխրով ալխարիմ առ քեզ, և
 լամ զքեզ իմ. ահա ՚ի բաց մեծիկցի
 յինէն զմեղաւորական զգեստն, զբեկեցի,
 զզնդապաճայնն և զոսկեհուսն, և զգե-
 ցայ զհանդերձս սգոյ, ահա լուծի զգօտի
 իմ ոսկեղէն, և զգեցցայ բուրձ. ահա
 զթագն իմ և զպսակն իմ ընկեցի ՚ի գլխոյ
 իմմէ, և զգեցցայ զմոխրի. ահաւասիկ յա-
 տան տան իմոյ յորինեալք էին կճայովք
 և պայծառ ծիրանովք, և որպէս յառաջա-
 գոյն գանոյս ցանէի և պայծառ կտաւովք
 մաքրէի, այժմ ցանեցան արտասուօք ի-
 մովք, և ընդ մոխրեին ամօթ ուղին. ահա
 ւասիկ արտասուալ իմոց մոխր սակաւա-
 ցաւ, և եղև իբրև կաւս գռեհկաց և ճանա-
 պարհաց: Ահաւասիկ արտասուաց իմոց
 զընթրիսն իմ արբուհական ետու կերա-
 կուր շահց օտարաց, և ես վօթիս գլչերն
 հաց շահց ճաշակեցի, և ջուր ոչ արբի.
 բերան իմ ցամաքեցաւ զօրէն թմրի, և
 լեզու իմ եղև որպէս զեղջիւր չոր, չրթունք
 իմ իբրև զխեցի, զէմք իմ ՚ի վայր խո-
 նարհեցան, և ոչ եմ այտուցեալ ամօթա-
 լից ՚ի սաստիկ արտասուաց իմոց, և նուա-
 զեցան յինէն ամենայն զօրք իմ. արդ ես
 զչաստուածան զոր յառաջագոյն պաշտէի
 անգիտութեամբ, և այժմ ծաննայ զի էին
 կուռք անմտունք և խուլք, և ետու գնոսա
 ՚ի կոխան. և զողք յափշտակեցին զոսկին և
 զարծաթն, և կորուսի զամենայն յերեսաց
 իմոց. վասն զի ՚ի քեզ ապաւինեցցայ, Տէր
 Աստուած Յովսեփայ. դու ապրեցո զիս,
 Տէր, և թողութիւն արա ինձ. զի վասն մե-
 շաց՝ անգիտութեամբ և տխմարութեամբ
 մոլորեցայ, և խօսեցայ բանս հայհոյու-
 թեան վասն տեառնէն իմոյ Յովսեփայ,
 զի ոչ զիտէի թէ իբրև զորդի սիրելի իցէ
 քո: Այլ խօսեցան ընդ իս մարդիկ իբրև
 պարզամտութեամբ, և ասացին թէ Յով-
 սեփ որդի է Հովութի միոյ յերկրէն Քանա-
 նացոց. և ես հաւատացի նոցա, մոլորեա-
 ցայ և արհամարհեցի զնա, և խօսեցայ
 բանս չարութեան վասն նորա, և ոչ զի-
 տէի թէ Յովսեփ իբրև զորդի սիրելի է
 քեզ. վասն զի ս՛վ որ ՚ի մարդկանէ ծնցի
 այսպիսի գեղցկութիւն, և այսքան իմաս-
 տութիւն և առաքինութիւն: Պահեա զնա,
 Տէր, իմաստութեամբ չնորէի քո. և զիս
 յանձն արա նմա իբրև զաղախին և սպա-
 սաւոր, զի և ես արկից զանկողինս նորա
 և լուացից զոտս նորա, և եղէց նմա որպէս
 զաղախին:

Շարունակելի: